ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N----Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՔԱՆԱՔԵՌ ՀԷԿ Հ.3 ՇԵՆՔԻ Հ.7 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Քանաքեռ ՀԷԿ հ.3 շենքի հ.7՝ 70,1քմ ընդհանուր մակերեսով բնակարանը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.06032015-01-0147 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Լիլյա, Դիանա, Լիանա, Արման Բալասյաններին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՔԱՆԱՔԵՌ ՀԷԿ Հ.3 ՇԵՆՔԻ Հ.7 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Արաբկիր վարչական շրջանի Քանաքեռ ՀԷԿ հ.3 շենքի հ.7՝ 70.1քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Լիլյա Բալասյանի ընտանիքին:

Քանաքեռ ՀԷԿ հ.3 շենքի հ.7 բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.06032015-01-0147 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Քննարկվող երկու սենյականոց բնակարանի մեկ սենյակը նախկին 26 կոմիսարների անվան շրջգործկոմի 09.07.1987թ. հ.12/19 որոշմամբ հատկացվել է Լիլյա Բալասյանին՝ ժամանակավոր բնակվելու նպատակով: Հետագայում վերջինիս կողմից առանց իրավահաստատող փաստաթղթերի զբաղեցվել է նաև վերոհիշյալ երկու սենյականոց բնակարանի ազատված երկրորդ սենյակը:

Լիլյա Բալասյանի ընտանիքը 1987 թվականից բնակվում է ք. Երևան, Քանաքեռ ՀԷԿ փողոցի հ.3 շենքի հ.7 հասցեում գտնվող բնակարանի մեկ սենյակում, իսկ 1993 թվականից ամբողջ բնակարանում /հիմք՝ «Քնար» համատիրության 30.10.2019թ. տեղեկանք/, և համաձայն ՀՀ ոստիկանության ԱՎՎ վարչության Արաբկիր անձնագրային բաժանմունքի կողմից 25.10.2019թ. տրամադրված հ.22/2-3654 գրության՝ Լիլյա Բալասյանը 2007թ.-ից, Դիանա և Լիանա Բալասյանները 2001թ.-ից և Արման Բալասյանը 2019թ.-ից հաշվառված են վերոնշյալ հասցեում: Քննարկվող ամբողջ բնակարանը փաստացի օգտագործվում է վերոնշյալ անձանց կողմից, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայությամբ պայմանավորված այն չի սեփականաշնորհվել /մասնավորեցվել/:

ՀՀ կադաստրի կոմիտեի 24.10.2019թ. տրված հ.հ.ԱՏ-24102019-99-0262, ԱՏ-24102019-99-0175, ԱՏ-24102019-99-0158 տեղեկանքների համաձայն՝ Լիլյա, Դիանա, Լիանա Բալասյանների անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև վերջին 5 տարվա ընթացքում նրանց կողմից կնքված անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում Հայաստանի Հանրապետությունում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՔԱՆԱՔԵՌ ՀԷԿ Հ. 3 ՇԵՆՔԻ Հ.7 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Քանաքեռ ՀԷԿ հ.3 շենքի հ.7 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՔԱՆԱՔԵՌ ՀԷԿ Հ. 3 ՇԵՆՔԻ Հ.7 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Քանաքեռ ՀԷԿ հ.3 շենքի հ.7 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ